Härnösands kommun

Բարի գալուստ միջնակարգ դպրոց

Նախընտրու՞մ եք լսել:
Այստեղ կգտնեք ամբողջ գրքույկը՝ գլուխների բաժանված։ Լսեք ձեր ուզած մասը։

Ի՞նչ է միջնակարգ դպրոցը

Երեխան պետք է հաճախի նախադպրոցական դասարան այն տարում, երբ լրանում է նրա 6 տարին: Նախադպրոցական դասարանից հետո երեխան հաճախում է առաջին դասարան: Մեկ տարի հետո երեխան հաճախում է երկրորդ դասարան: Դրանից հետո երեխան շարունակում է այդպես մինչև իններորդ դասարան:

Այն երեխաների համար, որոնք դպրոցից հետո չեն կարող տանը մենակ մնալ, կան երկարօրյա կենտրոններ կամ երկարօրյա, ինչպես շատերի կողմից ընդունված է ասել: Երկարօրյան 6 տարեկանից մինչև 13 տարեկան այն երեխաների համար է, որոնց ծնողներն աշխատում կամ սովորում են:

Երեխան կարող է լինել երկարօրյայում օրվա այն ժամին, երբ դպրոց չի գնում կամ գտնվում է արձակուրդում: Երեկոյան, գիշերը, շաբաթ-կիրակի կամ տոնական օրերին երեխան չի կարող լինել երկարօրյայում: Բացառություն կարող է լինել միայն այն երեխաների համար, որոնց ծնողներն աշխատում են երեկոյան, հանգստյան օրերին կամ գիշերները, և երեխաներն ուրիշ խնամող չունեն: Այդ երեխաների համար կան գիշերային կենտրոններ: Գիշերային կենտրոնների վերաբերյալ կարող եք ավելին կարդալ **harnosand.se/nattis** կայքում:

Նախադպրոցական դասարանը, 1-9-րդ դասարանները և երկարօրյան միասին կոչվում են միջնակարգ դպրոց:

Շվեդիայում դպրոց հաճախելն անվճար է: Եթե երեխան պետք է հաճախի

երկարօրյա, ապա քաղաքապետարանը դրա համար գումար է գանձում: Ձեր կողմից վճարվող գումարի չափը կախված է ձեր եկամտի չափից:

Դպրոցում երեխային անհրաժեշտ նյութերը կամ սարքավորումները, օրինակ գրքերը, ընթերցանության պլանշետը կամ համակարգիչը կարող են երեխաները դպրոցից պարտքով վերցնել և անվճար օգտագործել: Սակայն կարևոր է, որ երեխաները զգույշ լինեն այն ամենի նկատմամբ, ինչը թույլատրել են պարտքով վերցնել դպրոցից: Օրինակ, եթե 7-9-րդ դասարանի աշակերտների կողմից պարտքով վերցված համակարգիչը կոտրվում է կամ կորում, ապա ծնողներն են վճարում դրա համար:

Դուք կարևոր եք

Որպես ծնող, ձեր դերը կարևոր է, որ երեխան դպրոցում լավ սովորի: Դպրոցը ցանկանում է կապի մեջ լինել ձեզ հետ ու խոսել երեխայի դպրոցական կրթության մասին: Դա արվում է, որպեսզի միասին կարողանաք դպրոցական ժամանակը հնարավորինս լավ անցկացնեք: Որպեսզի դպրոցական օրը լավ լինի, կարևոր է, որ դուք ներգրավված լինեք ու հետևեք դպրոցից ստացվող տեղեկատվությանը, ուշադիր լինեք, որ երեխան ժամանակին քնի, նախաճաշ ուտի և իր հետ անհրաժեշտ բաները բերի դպրոց:

Պարտադիր դպրոց

Շվեդիայում դպրոց հաճախելը պարտադիր է: Դա նշանակում է, որ երեխաները պարտավոր են գնալ դպրոց: Որպես ծնող ձեր պատասխանատվությունն է, որ երեխան դպրոց հաճախի:

Եթե երեխան չի գնում դպրոց, ապա պետք է հատուկ պատճառ լինի դրա համար, օրինակ՝ երեխան հիվանդ է կամ դպրոցից ազատ լինելու թույլտվություն է ստացել:

Ուսումնական տարվա ամսաթվերը

Ուսումնական տարին միշտ սկսվում է ամառվանից հետո և բաղկացած է աշնանային ու գարնանային կիսամյակներից: Աշնանային կիսամյակը սկսվում է օգոստոսին և ավարտվում է դեկտեմբերին: Գարնանային կիսամյակը սկսվում է հունվարին և ավարտվում է հունիսին: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ճշգրիտ ամսաթվերը կարող եք գտնել **harnosand.se** կայքի «Երեխաներ և կրթություն» ներդիրում:

Դպրոցի ընտրություն

Որպես երեխայի ծնող կամ խնամակալ կարող եք ցանկություն հայտնել, թե երեխան որ դպրոցը հաճախի: Դուք իրավունք ունեք ցանկություն հայտնել ամբողջ քաղաքապետարանի բոլոր դպրոցներում, սակայն չեք կարող համոզված լինել, որ երեխային տեղ կհատկացնեն ձեր ցանկացած դպրոցում: Երեխան դրա փոխարեն միշտ իրավունք ունի մոտակա տարածքի որևէ դպրոցում տեղ ունենալու:

Մտադի՞ր եք ընտրել քաղաքապետարանին պատկանող այլ դպրոց, քան ձեր տարածքում գտնվող դպրոցը: Այդ դեպքում պետք է ձեր ցանկության մասին նշեք անմիջապես ձեր ընտրած դպրոցում: Եթե ձեր երեխան պետք է սկսի նախադպրոցական դասարան, ապա այլ դպրոցի վերաբերյալ հայտը պետք է ներկայացնեք փետրվարի 1-ից ոչ ուշ:

Հերնոսանդում կան քաղաքապետարանին պատկանող 11 միջնակարգ դպրոցներ, 1 մասնավոր և 1 պետական դպրոց խուլերի կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների համար:

Schoolity ուսումական հարթակ

Schoolity-ն ինտերնետային ուսումական հարթակ է, որն օգտագործում են դպրոցի անձնակազմը, աշակերտներն ու ծնողները միմյանց հետ հաղորդակցվելու, ինչպես նաև միմյանց ներկայությունը, բացակայությունը և աշակերտների դասացուցակը տեսնելու համար: Ուսումական հարթակը հեշտացնում է դպրոցում աշակերտների և դպրոցական անձնակազմի առօրյա աշխատանքը: Այն պետք է նաև նպաստի, որ հեշտությամբ հետևեք երեխայի դպրոց հաճախելուն: Ուսումական հարթակը գործում է շվեդերեն և անգլերեն լեզուներով: Դուք կարող եք ընտրել հարթակի լեզուն:

Schoolity-ից օգտվելու համար անհրաժեշտ են մուտք գործելու տվյալներ: Տվյալների ձեռք բերման վերաբերյալ կարող եք կարդալ harnosand.se/schoolity կայքում: Կարող եք դիմել Հերնոսանդի քաղաքապետարանի Սպասարկման կենտրոն, եթե Schoolity-ի հետ կապված օգնության կարիք ունեք:

Բացակայություն և հիվանդություն

Պարտավոր եք տեղեկացնել դպրոցին, եթե երեխան չի կարող դպրոց գալ հիվանդության պատճառով: Դպրոցին կարող եք տեղեկացնել Schoolity-ի միջոցով: Երեխայի յուրաքանչյուր օրվա բացակայությունը դպրոցից պետք է գրանցել:

Եթե երեխան պետք է դասի ժամին դպրոցից գնա, օրինակ՝ բժշկի կամ ատամնաբույժի, ապա այդ մասին պետք է տեղեկացնել դասվարին կամ դաստիարակին:

Ազատ օր վերցնելու թույլտվություն

Եթե երեխային պետք է ազատ օր վերցնել դպրոցից, ապա այդ հարցով պետք է ժամանակին դիմել դպրոցին: Դիմումի համար նախատեսված հատուկ ձևեր կան harnosand.se կայքում: Եթե դպրոցը գտնում է, որ ազատ օր թույլատրելը շատ և բացասական կանդրադառնա երեխայի դպրոցական աշխատանքի վրա, ապա երեխային ազատ օրվա թույլտվություն չի տրվի:

Մեկ ուսումնական տարվա ընթացքում աշակերտին չի կարելի թույլատրել 10-ից ավելի ազատ օրեր: Դա նշանակում է, որ երկարատև ճամփորդությունները պետք է պլանավորել և իրականացնել արձակուրդների ընթացքում:

Անհարգելի բացակայություն

Դպրոցի պատասխանատվությունն է իմանալու, թե դպրոցի ժամերին որտեղ են գտնվում բոլոր դպրոցականները: Եթե ձեր երեխան չի ներկայանում դասին, իսկ դպրոցին չեք տեղեկացրել երեխայի հիվանդ լինելու կամ ազատ օր ստանալու մասին, ապա դպրոցից կստանաք հաղորդագրություն անհարգելի բացակայության վերաբերյալ: Դա նշանակում է, որ երեխան բացակայում է դպրոցից առանց թույլտվության:

Եթե երեխան հիվանդ է կամ այլ պատճառով պետք է բացակայի դպրոցից, անհրաժեշտ է այդ մասին տեղեկացնել դպրոցին: Եթե ձեր կողմից չի արվել որևէ ծանուցում երեխայի բացակայության պատճառի վերաբերյալ, ապա դպրոցը կապ

կհաստատի ձեզ հետ: Առաջին հերթին կապ կհաստատեն հեռախոսային զանգի, էլեկտրոնային փոստի կամ հեռախոսային հաղորդագրության միջոցով, իսկ հաջորդ քայլը կլինի ձեր տուն այցելելը: Եթե նույնիսկ այդ ժամանակ չգտնեն երեխային կամ չտեղեկանան, թե ինչու երեխան դպրոցում չէ, ապա դպրոցն ի վերջո ստիպված կլինի դիմել ոստիկանություն կամ սոցիալական ծառայություն:

Եթե երեխան հաճախակի անհարգելի բացակայում է դպրոցից, ապա դպրոցը կկապվի ձեր հետ այդ հարցով զրուցելու համար:

Դպրոցների մասին օրենքը և ուսումնական պլանը

Դպրոցների մասին օրենքում գրված է, թե ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ ունեն երեխաները, աշակերտներն ու ծնողները: Օրենքում նշված է նաև, թե ինչպիսի պահանջներ են դրված դպրոցի պատասխանատուի, այսինքն գործունեության գլխավոր ղեկավարի առջև: Քանի որ ձեր երեխան հաճախում է քաղաքապետարանին պատկանող դպրոց, ապա գլխավոր ղեկավարը Հերնոսանդի քաղաքապետարանն է:

Դպրոցական վարչությունը պետական հիմնարկ է, որը որոշում է, թե երեխաներն ինչ առարկաներ պետք է սովորեն դպրոցում և որ դասարանում պետք է գիտելիքներ ստանան այդ առարկաներից: Դպրոցական վարչության որոշումները կարող եք կարդալ այսպես կոչված ուսումնական պլանում:

Շվեդիայի բոլոր դպրոցները պետք է հետևեն ուսումնական պլանին: Այդ ուսումնական պլանի հիման վրա են դպրոցները կառուցում և զարգացնում իրենց գործունեությունը:

Գնահատական և եզրակացություն

1-5-րդ դասարաններում յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ աշակերտները գարնանային կիսամյակին ստանում են այսպես կոչված եզրակացություններ: Եզրակացության մեջ նշվում է, թե աշակերտն ինչպես է հաղթահարել տվյալ դասարանի համար նախատեսված գիտելիքների մակարդակը:

Իրենց առաջին գնահատականն աշակերտները ստանում են 6-րդ դասարանի աշնանային կիսամյակի վերջում: Դրանից հետո աշակերտն ամեն կիսամյակին ստանում է նոր գնահատական և այդպես շարունակում մինչև 9-րդ դասարանի գարնանային կիսամյակ, երբ վերջնական գնահատականն է սահմանվում: Աշակերտն այդ վերջնական գնահատականով կարող է հետագայում դիմել ավագ դպրոց:

Գնահատականի սանդղակը սկսվում է A-ից մինչև F: A-ն համարվում է ամենաբարձր գնահատականը, իսկ F-ը նշանակում է գիտելիքների ձախողում:

Աշակերտի առողջություն և աջակցություն

Դպրոցն ունի աշակերտի առողջություն կոչվող ծառայություն: Այն ներառում է բժշկական, հոգեբանական, հոգեսոցիալական և հատուկ մանկավարժական միջամտություններ: Աշակերտի առողջության հարցերով աշխատում են դպրոցի բժիշկները, դպրոցի բուժքույրերը, հոգեբանները և սոցիալական հարցերով խորհրդատուները: Կա նաև հատուկ մանկավարժական իրավասություն ունեցող անձնակազմ:

Աշակերտի առողջության ոլորտում ընդգրկված անձնակազմը պետք է նպաստի, որ աշակերտները լավ զգան և առողջ լինեն, օրինակ՝ առողջապահական զրույցների և պատվաստումների շնորհիվ:

Աշակերտի առողջություն ծառայության միջոցով երեխան կարող է նաև հնարավորություն ստանալ պատվաստվել մանկական հիվանդությունների պատվաստման շվեդական ծրագրով: Այդ պատվաստումը պաշտպանում է հետևյալ 11 հիվանդություններից՝ ռոտավիրուսային վարակից, դիֆթերիայից, փայտացումից, կապույտ հազից, պոլիոմիելիտից, Հեմոֆիլուս գրիպի <բ> տեսակով առաջացած վարակներից, պնևմակոկերից, կարմրուկից, խոզուկից, կարմրախտից և մարդու պապիլոմվիրուսից (HPV) առաջացած լուրջ հիվանդություններից:

Առարկաներ

Միջնակարգ դպրոցում աշակերտները սովորում են հետևյալ առարկաները՝ շվեդերեն, շվեդերենը որպես երկրորդ լեզու, անգլերեն, մաթեմատիկա, նկարչություն, երաժշտություն, ձեռագործություն, կենցաղային գիտելիքներ, սպորտ և առողջություն, հասարակագիտություն, կրոն, պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, տեխնիկա, աշակերտի ընտրություն, ժամանակակից լեզու, օրինակ՝ աշակերտը կարող է ընտրել իսպաներեն, գերմաներեն կամ անգլերեն և անհրաժեշտության դեպքում մայրենի լեզվի դասավանդում: Աշակերտները բոլոր առարկաներն անընդհատ չեն սովորում: Դրանք փոփոխվում են ըստ կիսամյակի և դասարանի:

Շվեդերենը որպես երկրորդ լեզու

Շվեդերենը որպես երկրորդ լեզու (SVA) առանձին առարկա է և հավասարեցվում է շվեդերեն առարկայի հետ: Շվեդերենից բացի այլ մայրենի լեզու ունեցող աշակերտները կարող են իրավունք ունենալ շվեդերենը որպես երկրորդ լեզու առարկայի ուսուցման: Շվեդերենը որպես երկրորդ լեզու առակայի ուսուցման ժամանակ անդրադառնում են այնպիսի հարցերի, որոնք հատուկ են երկրորդ լեզու սովորելու համար, օրինակ՝ արտասանությունը, բառերի դասավորությունը և

համեմատություններն աշակերտի բոլոր լեզուների հետ: Դպրոցն է որոշում, արդյոք աշակերտն իրավունք կամ կարիք ունի շվեդերենը որպես երկրորդ լեզու առարկայի ուսուցման:

Մայրենի լեզվի ուսուցում և ուսումնական ուղեցույց մայրենի լեզվով

Մայրենի լեզուն մեծ նշանակություն ունի երեխայի լեզվի, մտքերի, ինքնության և անհատականության զարգացման համար: Լավ զարգացած մայրենի լեզուն ստեղծում է լավ պայմաններ շվեդերեն, այլ լեզուներ և առարկաներ սովորելու համար:

Ձեր երեխան կարող է ուսուցում ստանալ իր մայրենի լեզվով: Եթե ցանկանում եք, որ երեխան ուսուցում ստանա իր մայրենի լեզվով, ապա դրա համար պետք է դիմել: Դա անում եք քաղաքապետարանի կայքում տեղադրված էլեկտրոնային ծառայության միջոցով՝ **harnosand.se/modersmalsundervisning**

Սպորտի և լողի պարապմունքներ

Շարժվելը, լավ սովորություններ ունենալն ու իմաստալից ազատ ժամանակը կարևոր են երեխայի բարեկեցության համար: Ուսումնական ծրագիրը ներառում է սպորտ և առողջություն առարկան: Այն պետք է երեխային դրական փորձ տա սպորտի, շարժման և բացօթյա կյանքի վերաբերյալ: Ուսումնական ծրագրում նշված է նաև, որ երեխան պետք է լողալ սովորի:

Բոլոր երեխաները պետք է մասնակցեն սպորտի և լողի պարապմունքներին: Որպես ծնող կարևոր դեր ունեք, որպեսզի ձեր երեխան ունենա սպորտային հագուստ,

լողազգեստ և սրբիչ այն օրերին, երբ երեխան դպրոցում սպորտի պարապմունք ունի: Սպորտից առաջ երեխաները պետք է հագուստը փոխեն, իսկ սպորտից հետո ցնցուղ ընդունեն:

Եթե երեխան որևէ պատճառով չի կարող սպորտի պարապմունքին մասնակցել, պետք է տեղեկացնեք ուսուցչին:

Զարգացման վերաբերյալ զրույցներ և ծնողական ժողովներ

Ամեն կիսամյակ դպրոցը ցանկանում է հանդիպել ձեզ որպես ծնող: Կիսամյակը մեկ անգամ անցկացվում է երեխայի զարգացման վերաբերյալ զրույց: Այդ ժամանակ դուք և ձեր երեխան հանդիպում եք ուսուցչին կամ դաստիարակին և խոսում այն մասին, թե ինչպես է ընթանում երեխայի դպրոցը:

Ուսումնական տարին մեկ անգամ, սովորաբար աշնան սկզբին, տեղի է ունենում ծնողական ժողով: Այդ ժամանակ դպրոցը ցանկանում է հանդիպել դասարանի բոլոր ծնողներին և պատմել դպրոցի և գալիք ուսումնական տարվա մասին:

Ցանկության դեպքում կարող եք այցելել դպրոց: Բայց մինչ դա անելը, պետք է այդ մասին համաձայնեցնեք ձեր երեխայի ուսուցչի հետ և գալուց գրանցվեք դպրոցի գրասենյակում:

Սնունդ

Ձեր երեխան դպրոցում ճաշ է ստանում: Ճաշն անվճար է: Դպրոցների ճնշող մեծամասնությունում կարելի է ընտրել մի քանի ուտեստներ, ինչպես նաև բանջարեղեն տարբեր ձևերով: Երեխաները, ովքեր բժշկական նկատառումներից ելնելով, օրինակ՝ ալերգիայի պատճառով հատուկ սննդակարգի կարիք ունեն, կարող են ստանալ այն, եթե բժշկի տեղեկանք ներկայացնեք: Եթե ձեր երեխան բուսակեր է, վեգան կամ կրոնական նկատառումներից ելնելով հատուկ սննդի կարիք ունի, պետք է տեղեկացնեք դպրոցին harnosand.se/specialkost կայքում, սակայն տեղեկանք ներկայացնելու կարիք չկա:

Դպրոցական տրանսպորտի միջոց

Երեխան կարող է ունենալ դպրոցական տրանսպորտի միջոցից օգտվելու իրավունք, եթե երեխան ապրում է դպրոցից հեռու, դպրոցի երթուղին վտանգավոր է կամ երեխան ունի հաշմանդամություն: Դա նշանակում է, որ երեխան կարող է անվճար երթևեկել տան և դպրոցի միջև:

Դպրոցական տրանսպորտի միջոցից օգտվելը կարող է լինել տարբեր ձևի: Ձեր երեխան կարող է ավտոբուսի քարտ ստանալ դպրոցից և երթևեկել սովորական ավտոբուսով, բայց կարող է նաև հատուկ պատվիրված ավտոբուսներով, միկրոավտոբուսներով կամ տաքսիներով երթևեկել: Լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել **harnosand.se/skolskjuts** կայքում:

Եթե երեխան ստացել է դպրոցական տրանսպորտի միջոցից օգտվելու իրավունք, բայց այն լավ չի գործում, ապա պետք է էլեկտրոնային փոստ ուղարկեք **trafikenheten@harnosand.se**

Բջջային հեռախոսներ

Նախադպրոցական տարիքի դասարանից մինչև 6-րդ դասարանի երեխաներին դպրոցական օրվա ընթացքում արգելվում է օգտվել բջջային հեռախոսից: Այդ իսկ պատճառով դպրոցը ցանկանում է, որ երեխաներն իրենց հեռախոսները թողնեն տանը: Եթե երեխաներն այնուամենայնիվ հեռախոսը բերում են դպրոց, ապա դպրոցական օրվա սկզբում պետք է այն թողնեն ուսուցչի մոտ, իսկ դպրոցական օրվա ավարտից հետո այն հետ վերցնեն:

7-9-րդ դասարանների աշակերտներին արգելվում է դասերի ժամին բջջային հեռախոս ունենալ:

Ծանուցման պարտավորություն t

Եթե կասկած կա, որ որևէ երեխայի վնաս են պատճառում, կարելի է այդ մասին հայտնել քաղաքապետարան: Դա կոչվում է մտահոգության մասին հաղորդում: Օրինակ՝ կարող է լինել մտահոգություն, որ երեխային հարվածում են կամ երեխան չի ստանում իրեն անհրաժեշտ խնամքը:

Յուրաքանչյուր անձ, ով ունի այնպիսի մասնագիտություն, որի բնույթն է երեխաների և երիտասարդների հետ աշխատելը, ըստ օրենքի պարտավոր է մտահոգության մասին հաղորդում ներկայացնել, եթե իր աշխատանքի ընթացքում կասկածում է, որ երեխային վնաս են պատճառում:

Երկարօրյա կենտրոններ կամ երկարօրյա

Երկարօրյան բաց է աշխատանքային օրերին ժամը 06.30-18.30:

Երեխաներն իրավունք ունեն լինել երկարօրյայում այն ժամանակ, երբ երկու ծնողներն էլ աշխատում են: Դուք պետք է նախապես տեղեկացնեք, թե որ ժամերին է ձեր երեխան գտնվելու երկարօրյայում:

Ուսումնական տարվա ընթացքում երկարօրյաները չորս անգամ ունեն պլանավորման օրեր: Այդ օրերին աշխատում են փոխարինողներ: Շատ դպրոցներ պահանջում են, որ դուք՝ որպես ծնող, լրացուցիչ տեղեկացնեք դպրոցին, եթե ձեր երեխան այս օրերին նույնպես պետք է հաճախի երկարօրյա:

Եթե ձեր երեխան այլևս երկարօրյայում գտնվելու կարիք չունի, ապա պետք է առնվազն 14 օր առաջ չեղարկեք երեխայի տեղը երկարօրյայում:

Լուսանկարել և նկարահանել դպրոցում

Դպրոցում աշխատող անձնակազմը կարող է լուսանկարել և նկարահանել դպրոցի գործունեությունը: Դա արվում է, օրինակ, աշակերտների զարգացումը փաստագրելու և ուսուցումը հեշտացնելու համար: Որպես խնամակալ՝ ձեզ արգելված է դպրոցում լուսանկարել և նկարահանել:

Եթե համաձայն եք, որ ձեր երեխայի նկարները երևան քաղաքապետարանի կայքում և սոցիալական ցանցերում, կարող եք այդ մասին լրացնել ձևաթղթում: Ձևաթուղթը կոչվում է «Համաձայնություն անձնական տվյալների, լուսանկարների և ֆիլմերի հրապարակմանը՝ նախադպրոցական դասարանից մինչև 9-րդ դասարան»:

Ձևաթղթեր և էլեկտրոնային ծառայություններ

Հատուկ սնունդ

Հատուկ սնունդ
Մայրենի լեզվի ուսուցում

Հրապարակման համաձայնություն/Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ (GDPR)

Դպրոցի կոնտակտային տվյալներ

Härnösands
kommun